№ 91 Յունիսի 12 (24) 1879 Յունիսի 12 (24) № 91

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Ներքին տեսութիւն։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կիլիկեան ընկերութեան յայտարարութիւնը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

1 յունիսի

Վերջապէս Մանկունի եպիսկոպոսը Կ. Պոլսէն վերադարձաւ Էջմիածին և սկսեց իր գործը, իսկ Տէր-Մատթէոսեան Գրիգոր, Խուդավերդեան Ներսէս և Աբամելիքեան Գէորգ վարդապետները ձեռնադրվեցան եպիսկոպոս. սոցա հետ էին և հինգ վարդապետներ, որոնք ձեռնադրվեցան եպիսկոպոսներ, Աստուած տար մեր նորապակ հայրերը իրանց յանձնված անօգնական և թշուառ հօտը իբրև արթուն հովիւներ ամեն վտանգներից ազատ պահելու մեծ փոյթ ունենային։ Ձեռնադրութեան ժամանակ բազմութիւնը անհամեմատ մեծ էր, և հանդէսը փառաւոր. վեհափառ Կաթողիկոսը չէր պատարագիչ, երևի տկարութեան պատճառաւ։ Վեհափառ Հայրապետի օծման տարեդարձը ևս այս տարի ամենափառաւոր կերպիւ կատարվեցաւ։ Երևանից հրաւիրված էր քաղաքական նուագածուների խումբը, որոնք շատ ախորժ կերպիւ երգում էին և Վեհի անուան նուիրած «Բաբէ» երգը. նախ քան պատարագը վեհարանի առաջև կատարվեց սովորական մաղթանքը, ուր և կարդացվեցան ճառեր որոնց մէկը բնաւ վերաբերութիւն չունէր օրական հանդիսին, մի խօսքով իր երկարաբանութեան և յաճախ կրկնութիւններով կարելի է ասել զզուանք պատճառեց չատերին, որով յայտնում էր երևելի հռետորը թէ՝ ճեմարանի աշակերտները հանդգնակութեամբ ժողվել են մի գումար և գնել են մէկ «վիրգրիչնի բիլէթ»։ Մի զարմացք ինձ խեղդում է, պատուելի ընթերցող, ճեմարանում սովորող բոլոր աշակերտները որը և չքաւոր երեխաներ են, որտեղից են ձեռք բերում ուրեմն այն դրամը և վիրգրիչնի բիլէթ գնում ճեմարանի համար։ Ինձ կը թուի որ այս ևս ունի իր նպատակը, թէպէտ և այս...բայց աշակերտներին պէտք չէ զրաղեցնել այնպիսի աւելորդաբանութիւններով, որոնք փոխանակ օգուտների մեծամեծ վնասներ կը պատճառեն։ աշակերտին պէտք է սովորել, ուսուցչին ևս պարտք է սովորեցնել, իսկ տեսչին և Նորին Վեհափառութեան հսկել կարելի եղածին չափ ա/րով, իսկ ինչ կը վերաբերի ազգին, ազգը շատ լաւ է ճանաչում իր պարտականութիւնը. նա ինչպէս մինչև այժմ հազարաւոր դէպքերում օգնել է, պատրաստ է օգնելու սուրը աթոռին ֆ այժմ ևս, միայն թէ Էջմիածինը ևս պարտականութիւն համարի արժանաւոր հովիւներ և հայրեր պատրաստելու ազգի համար։

Վաղարշապատցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, 1 յունիսի

Ձեր լրագրի 61-րդ համարում հրատարակվեց մի Նամակ Զարէհ քայ վանահայր Աստուածատուր վարդապետից ուղղված, որով նա յարձակվում է մի անձնաւորութեան դէմ, որը, իր կարծիքով, կանչելով իր տունը Փիր գիւղացիներից, — զրդել է նրա վրա զանգատ տալու վանքի անտառի վերաբերութեամբ։

Թէև նամակագիր վարդապետը նոյն անձնաւորութիւնը չէ անուանել, բայց Գանձակում փիրբեցւոց հետ Զարէհ քայ վանքի անտառի վերաբերմամբ խօսող անձը միայն ես լինելով, յարձակումն իմ դէմ է ուղղած անշուշտ։ Ուստի գործի իսկութիւնը բացատրելու համար ստիպված եմ ասել հետևեալը։

Մարտ ամսի 20-ին ես ստանում եմ մի հաղորդագրութիւն ի տնտեսական մասնէ սինոդի ս. Էջմիածնի ի 16-էն նոյն ամսի, № 776, որով հրաւիրում է տեղեկանալ՝ կամ անձամբ, կամ ընդ ձեռն՝ որոց արժան է, ստոյգ է արդեօք այն լուրը, որ հասել է Սինոդի առաջին թէ՝ յիրաւի Զարէհքայ վանահայրը Դեհդաբէգու պղնձահանքի կառավարչի հետ պայման է կապել—վանքի անտառից 10,000-ից մինչև 30,000 փայտ տալու, որպիսի պայմանաւ և որոյ թոյլտարութեամբ, և զհետևանացն յայտնել Սինոդին։

Միջոց չունենալով անձամբ քաղաքից դուրս գնալու, ես ստիպվեցայ հրաւիրել ինձ մօտ Փիր գիւղի տանուտէրին մի քանի նոյն գիւղացւոց հետ, և երբ նա եկաւ մէկ երկու մարդով, ես սկսեցի նրանցից հարց ու փորձ անել յիշեալ գործի մասին։ Նրանք մի քանի պատասխաններ տուին ինձ, խընդրելով միջնորդել Սինոդին, որ մի անաչառ քննիչ ուղարկել բարեհաճի. ուստի և ես նրանց ասածները յայտնեցի Սինոդին, 20-ին ապրիլի սոյն ամի։

Այդ իրողութիւնը լսելով վանահայր Աստուածատուր վարդապետը և կարդալով «Մշակի» 49 համարում տպված լուրը, որ չը դիտեմ ով էր հաղորդել, փոխանակ իմանալու բանի որպէսութիւնը, ցանկացաւ հրապարակ դուրս գալ պարբերական թերթերի մէջ ոչ թէ միայն իրան արդարացնելու նպատակաւ, այլ և ցոյց տալու աշխարհին իր կծված սիրտը և բնաւորութիւնը։ Նա կարծեց մեզ իր թշնամի, ինքնակոչ հաշուառես, Գանձակի հասարակութեան հետ, հաշիւ չը վերջացնող, անմեղ հասարակութիւնը արտասուքով քնացնող, եկեղեցապատկան գեանի վրա չինած այգի փողը չը վճարող,—հազար ու մէկ խորամանկ ճանապարհներով եկեղեցւոյ հինգ հարիւր ռուբլիներ ստացող և մի քանի հարիւրների չափ էլ վանքից օգուտ քաղելու ցանկացող։

Ուշիմ ընթերցողը կը տեսնէ, որ ես յիշեալ հանգամանքի մէջ կատարել եմ միայն մի պարտք, որը յանձնել էր ինձ ս. Սինոդն Էջմիածնի և յայտնել եմ Սինոդին միայն այն, ինչ որ միանգամայն ասած են ինձ Փիր գիւղի տանուտէրը և նրա հետ եկած մարդիկ։ Ուղիղ է թէ ոչ նրանց ասածները, այդ իմ գործս չը լինելով կարելի է ստուգել միմիայն տնձամբ գնալով ու ամեն բան տեղն ու տեղը տեսնելով, միւս կողմից՝ Զարէհքայ վանքի անտառը գտնվելով տեղւոյս անտառապետի ժամանակաւոր իրաւասութեան տակը, ըստ վճռոյ դատարանի, կարօտ է նրա հսկողութեան առաւել, քան հոգևոր իշխանութեան և կամ մի որ և իցէ անձի, իսկ ինչ կը վերաբերի նամակագիր վարդապետի միւս ասածներին, դրա մասին հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ասել։

Առաջին՝ ամենին յայտնի է, որ ես ունենալով այդի Արարլու անուանեալ գեանի վրա, ամենից առաջ վճարել եմ նրա գինը և ամենից օրինաւոր կապալ ստացել, սեպտեմբերի 8-ին 1877 ամի, № 243։

Երկրորդ՝ եթէ ես ունեմ հաշիւ Գանձակի հասարակութեան հետ, այդ մասին ի զուր է տանջվում Աստուածատուր վարդապետը, ասելով թէ իբր իմ քաղաքային հաշիւների մէջ թերութիւն կայ։ Գանձակը զուրկ չէ խնացող և հասկացող մարդիկներից, որոնք կարող են ուրեմն և պաշտպանել իրանց իրաւունքները առանց անապատից եկած ձայնի... նրանց չէ կարող քնացնել ոչինչ արտասուք։ Արտասուքները շատ կարելի է օգտակար են լինում վանքերում....

Երրորդ՝ շատերին յայտնի է մինչև անդամ և պարբերական թերթերի մէջ եղած հրատարակութիւններից թէ ինչ դժուար դրութեան մէջ էր գտնվում եկեղեցապատկան Արարլու անուանեալ գեանի հարցը։ Եթէ հոգևոր բարձր իշխանութիւնը, ի նկատի ունենալով իմ ժրաջան աշխատութիւնը այդ գործի վերաբերմամբ, արժան դատեց վարձատրել ինձ մի յայտնի գումարով, այդ կարող էր միայն վանահօր չարակամութիւնը գրգռել, իսկ դրանից գալ այն եզրակացութեանը թէ՝ գուցէ ես նպատակ ունեմ մի քանի հարիւրների չափ էլ վանքից օգուտ քաղել, այդ մի և նոյնն է ասել թէ վանահայրը, խօսելով իմ հաշուի մասին, գուցէ նպատակ ունի իմ տեղը ստանալու։ Բացի դրանից եթէ վանահայրը իր թերի հասկացողութեամբ նկատում է այս գործի մէջ մի անարդարութիւն, նա պէտք է յարձակվէր ս. Սինոդի վրա, որ հրամայել է տեղիս հոգևոր կառավարութեանը վարձատրել իմ աշխատութիւնը։

Վերջապէս ես չը կարծեմ թէ նամակագիր վարդապետի հայհոյանքները, վայր ի վերոյ փողոցային կեղտոտ խօսքերը մի որ և իցէ մարդու վրա ազդեցութիւն ունենան, ուր մնաց՝ երկար ժամանակ չէ որ յիշեալ վարդապետը նահանգական դատարանում մեղադրվում նստարանի վրա նստած քաւում էր իր մեղքերը...

Վերջացնելով նամակս, կասեմ, որ Աստուածատուր վարդապետը ի զուր է մեզ քարոզ կարդում, առանց նրա քարոզի մենք գիտենք մեր պարտքը։— Յարգոյ խմբագիր, նամակիս տեղի չնորհելու բարեհաճեցէք ձեր լրագրի էջերում։

Քաղաքացուս Ղ. Ս. Յովհաննիսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալքալաք, 5 յունիսի

«Մշակի» 64 համարում տպված Ախալքալաքի լուրը, որը ի միջի այլոց յայտնում էր բժշկի օգնականի (Ֆելդշէր) մի գիւղացուց բժշկութեան համար առած վերստական մի ռուբլ վճարքի մասին, պատատպեցին երկու ռուս թերթեր, Թիֆլիսի «Кавказъ» և Ս. Պետերբուրգի «Голосъ» լրագիրները։ Դրա առիթով «Кавказъ-ի» 108 համարում տպված էր վերոյիշեալ ֆելդշէր Ի. Ս. Ավետիսեանցի նամակը, որի մէջ նա ասում է, որ այդ լուրը մի զրպարտութիւն է, թէ Ախալքալաքում երկու կուսակցութիւններ են կազմվել որոնց մէնը կամենում է Տէր-Գրիգորեանցին քաղաքային բժիշկ ունենալ, իսկ միւսը ոչ, և ահա, ասում է, Տէր Գրիգորեանի կուսակցութիւնը, հակառակ կուսակցութեանը համոզելու համար դիմում է մամուլին... Չը գիտեմ ինչ յարաբերութիւն կայ Ավետիսեանցի բնաւորութեան և այդ երևակայական կուսակցութիւնների մէջ, միայն ցաւում եմ որ «Кавказъ-ի» խմբագրութիւնը տեղ է տուել մի այդպիսի անմիտ նամակի։

Ես հարկաւոր եմ համարում աւելացնել որ սկված քննութիւնը այդ գործի վերաբերութեամբ արդարացրեց «Մշակի» թղթակցի հաղորդած լուրի ճշդութիւնը։

Մի և նոյն նամակի մէջ պ. Ավետիսեանցը ասում է, որ գիւղացիք այնքան հաւատ չեն ընծայում բժշկականութեանը որ այդքան փող տան մի ֆելդշերի։

Այդ բանը հերքվում է նոյն իսկ այդ նամակագրութեան նիւթ դարձած, գիւղացու դատած և Ավետիսեանցին հեղինակութեամբ ստացած 15 ռուբլիներով.... Եթէ մինչև անդամ այդպէս էլ լիներ, դրանում մեղաւոր չէ ժողովուրդը, այլ մեղաւոր են Ավետիսեանցի նման ինքնակոչ էսկուլապները։

Ցանկալի է, որ ինչպէս ուշադրութիւն դարձրած է Ավետիսեանցի ապօրինի վարմունքի վրա, նոյնպէս ուշադրութիւն դարձնվի և գաւառական բժշկի բացակայութեանը և դրանից յառաջացած՝ ժողովրդի—բժշկական կողմից—անօգնական դրութեան վրա։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 յունիսի

Յօդուտ Կ. Պոլսոյ «Արարատեան» ընկերութեան ստորագրութեամբ 13 ռուբլ հաւաքած լինելով, նոյնը ահաւասիկ ձեզ եմ ուղարկում, խընդրելով որ բարեհաճէք այդ փոքր նուէրը ընկերութեան հասցնելու. այդ ստորագրութեան չնչանը շատ փոքր լինելով ցաւում եմ որ աւելի մեծ գումար հաւաքել չը կարողացայ, այնու ամենայնիւ որ այդքանով ևս կարողացայ մասնակից լինել իմ սիրելի եղբայրների լուսաւորութեան գործին և այդ փոքր նուէրը թող համարվի իմ և իմ ազնիւ ընկերների այն անսահման համակրութիւնը՝ որ ունինք դէպի մեր համարիւն հեռաւոր եղբայրները։

Նուիրատաց անունները. Օհանեանց 1 ռուբլ, Տ. Եսայեանց 1 ռ., Սահակեանց 1 ռ., Միրզոյեանց 1 ռ., Գրիգորեանց 1 ռ., Գանչումեանց 1 ռ., Շահմնարեանց 1 ռ., Միրիմանեանց 1 ռ., Ս. Տէր-Յակոբեանց 1 ռ., Ալբէրթեանց 1 ռ., Լ. Մուրթաֆեանց 3 ռ։ Աշակերտ IV-րդ դասատան Տէր-Յակոբեան գիմնազիայի։

Լ. Մուրթաֆեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ խմելու ջուր հազիւ է գտնվում։ Ժողովուրդը սաստիկ յուսահատված է։

—

Մեզ գրում են Վաղարշապատից, որ այնտեղ նշանվել է մի պօլսեցի պարոն, որ միշտ վանքումն էր ապրում։ Պարոնի նշանի մատանին Ս. Էջմիածնի Թանգարանի մէջ են տեսել։ Ասում են, որ մատանին մի հարուստ եպիսկոպոսից է մնացել, բայց յայտնի չէ թէ նա ինչպէս է պօլսեցու ձեռքը ընկել։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ հաղորդում են, որ յունիսի 1-ին եկած կարկուտը մեծ վնասներ է տվել։ Խաղողի որթերը բոլորովին փչացած են։

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ օրիորդաց դպրոցի քննութեան ժամանակ ուսուցիչներից մէկը հարբած է եղել։

—

Մեզ հաղորդում են ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ, որ այնտեղ վերջին ժամանակները բաւական առատ անձրևներ են եկել։ Միայն կարկուտը մեծ վնաս է տվել ցանքերին։

—

Մեր գաւառական քաղաքներից ստացանք բազմաթիւ նամակներ, որոնցով շնորհակալութիւն է յայտնվում «Մշակի» խմբագիր Գրիգոր Աբծրունուն «Հայաստանի տնտեսական դրութիւնը» դասախօսութեան համար։

—

Պ. Զ. Գրիգորեանը մեզ խնդրում է յայտնել, որ նա մինչև այժմ չէ հասցրել բաժանորդներին «Արևելեան Մամուլ» ամսագրի փետրվարի և մարտի տետրակները իրանից անկախ պատճառներով։ Պարոնը այդ ամիսների տետրակները ստացել է մայիսի 9-ին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Ցայտ է թէ հողելոյս Կարապետ վարդապետ Շահնազարեանի կտակը կը պահանջէր որ Կիլիկիոյ մէջ բացուէր այն դպրոցը որ Խասգիւղի մէջ հիմնուեցաւ Նուպար-Շահնազարեան անուամբ։ Եթէ զանազան պարագայներ չէն ներած յայնժամ հայրենասէր

վարդապետին փափաքն իրագործել, իւր սաները մտածեցին թէ իրենք պարտաւոր են գործադրել իրենց բարերարին յետին կամքը: Ուստի, 1871 սեպտեմբեր 1-ին Խասգիւղի կրթարանին մէջ հիմնեցին Վարդանեան ընկերութիւնը, որոյ նպատակն էր մի վարժարան բանալ Կիլիկիոյ Հաճըն քաղաքին մէջ: Վարժարանը բացուեցաւ արդարև և կը շարունակուի ցարդ անխափան, Հաճընի աղջնայոց համար լուսաւորութեան կետրոն մը հանդիսանալով:

Սակայն, Շահնազարեանի սաներէն ոմանք, նկատելով որ Վարդանեան ընկերութեան շըրջանակն ընդլայնելու ժամանակն հասած էր, ներկայացան բարձրաշնորհ սրբազան պատրիարք Հօր, և խնդրեցին որ հաճի իւր բարձր հովանաւորութեան ներքև առնուլ այն ուսանողաց միութիւնը որք իւր վերատեսչութեան տակ դաստիարակուած էին Խասգիւղի մէջ: Նորին սրբազնութիւն, յօժարափոյթ ընդունելով այս աղաչանքը, իւր յատուկ հրաւիրագրով ի ժողով գումարեց բոլոր Նուպար-Շահնազարեան ուսանողներն, որք, 1879 փետրուար 18-ին, Վարդանեան ընկերութիւնը վերակազմելով, ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անուանեցին զայն, նպատակ ունենալով Ազգային դաստիարակութիւնն ընդհանրացուցանել ամբողջ Կիլիկիոյ մէջ:

Կիլիկեան ընկերութիւնը, իւր կազմութիւնը լրացուցած ըլլալով այսօր, կը փութայ սոյն յայտարարութեամբ ներկայանալ ազգին, հարկաւոր տեղեկութիւններն հայթայթելով նմա:

Հիմնական կանոնագիր

Կիլիկեան ընկերութեան

Հաստատեալ 1871-ին

Շահնազարեան վարժարանի աշակերտներէն

—

Նպատակ

Ազգային դաստիարակութիւնն ընդհանրացուցանել Կիլիկիոյ մէջ:

Ընկերակցութիւն.

Յօդուած 1. Ընկերութեան կրնայ անդամակցել ամէն հայ, եթէ մէկ ընկերի կողմէ առաջարկուի և գործադիր ժողովէն ընդունուի:

Յօդուած 2. Գաւառաց մէջ քաղաքները կը կազմեն ընկերութեանս գործին ճիւղերը, որք իւր վարչական սկզբանց համեմատ կը կառավարուին:

Յօդուած 3. Անձնիւր ընկեր պարտի ամիսը առ նուազն մէկ բաժին վճարել, որ է մէկ արծաթ դրշ:

Յօդուած 4. Ընկերութեանս ընդհանուր և գործադիր ժողովոց դիւաններուն հաւանութեամբ կընդունի պատուոյ անդամներ ալ, հետեւեալ պայմաններով:

ա. Անձնիւր պատուոյ անդամ պարտի տարին առ նուազն երեք օսմանեան ոսկի բաժնեգին վճարել:

բ. Անձնիւր պատուոյ անդամ իրաւունք ունի ընդհանուր ժողովոյ նիստերուն ներկայ գտնուել և իւր դիտողութիւնները գրաւոր կերպով հաղորդել դիւանին:

Վարչութիւն.

Յօդուած 5. Ընկերութեանս վարչական մարմինը կը կազմեն ընդհանուր ժողով մը և գործադիր ժողով մը:

Ընդհանուր ժողով

Յօդուած 6. Ընդհանուր ժողովոյ պաշտօնն է.

ա. Ընկերութեան բոլոր գործոց վերատեսչութիւնը և համարառութիւնը ամէն օրինական նստի մէջ, որ երկու ամիսը անգամ մը տեղի կ'ունենայ:

բ. Ընտրել երաշխաւորեալ գանձապետ մը որ պաշտօնապէս և անհատապէս պատասխանատու է ընդհանուր և գործադիր ժողովոյ, ընտրել նաև գործադիր ժողովոյ միւս անդամները և կնքապահ մը որոյ պաշտօնն է կնքել ընկերութեան պաշտօնագրերը և տոմսերը:

գ. Գործադիր ժողովոյ գործելու եղանակը գծել գրաւոր հրահանգով:

Գործադիր ժողով.

Յօդուած 7. Գործադիր ժողովոյ պաշտօնն է

ա. Ընկերութեան ընթացիկ գործերը կատարել:

բ. Պատրաստել ընկերութեան հաշուեցոյցը և դպրոցական յայտագիրը և ընդհանուր ժողովոյ վաւերացմամբ գործադրել զայնս:

Յօդուած 8. Գործադիր ժողովը կը բաղկանայ եօթ անձերէ որք հաւաքաբար պատասխանատու են ընդհանուր ժողովոյ:

Վարչական սկզբունք

Յօդուած 9. Անձնիւր ժողով կընտրէ իւր դիւանը:

Յօդուած 10. Ընտրութիւնը գաղտնի քուէով կը կատարուին:

Յօդուած 11. Նոյն անձը թէ համարատու և թէ համարառու չը կրնար ըլլալ:

Յօդուած 12. Ո և է կերպով հրաժարեալ ընկեր մը իրաւունք չունի ոչինչ պահանջել:

Յօդուած 13. Ընդհանուր ժողովոյ նիստերը կանխաւ կազդարարուին ընկերաց թէ յատուկ հրաւիրագրերով և թէ լրագրաց միջոցաւ:

Յօդուած 14. Ընդհանուր ժողովը կը գումարի ներկայ անդամներով. բացակայք դրուած որոշմանց դէմ բողոքելու իրաւունք չունին:

Յօդուած 15. Ընդհանուր ժողովը կրնայ արտաքոյ կարգի նիստ ընել, կամ ընդհանուր ժողովոյ դիւանի, կամ գործադիր ժողովոյ և կամ 12 անդամոց առաջարկութեամբ:

Յօդուած 16. Ազգային ուրիշ ընկերութիւն մը գործադիր ժողովոյն անդամ եղող անձինք ընկերութեանս գործադիր ժողովոյն չեն կրնար անդամակցել:

Յօդուած 17. Դիւանի և գործադիր ժողովոյ անդամք վերընտրելի են, եթէ անվստահութեան քուէով պաշտօնանկ եղած չեն:

Յօդուած 18. Իւր պարտքը անթերի չը կատարող ժողով կամ ժողովական անվստահութեան քուէով պաշտօնանկ կըլլայ ընդհանուր ժողովով որոշմամբ: Ամբաստանեալը չը կրնար մասնակցիր սոյն քուէարկութեան:

Յօդուած 19. Ընդհանուր ժողովը գործադիր ժողովոյ զեթ երկու անդամները նախորդ գործադիր ժողովոյ ջմէէն ընտրէ, եթէ նոքա անվստահութեան քուէով կպաշտօնանկ եղած չեն:

Յօդուած 20. Գործադիր ժողովը պարտի ընդհանուր ժողովոյ ամէն օրինակ նստին ներկայացունել իւր գործառնութեանց տեղեկագիրը, ամէն չորս ամիսը ընկերութեան հաշիւները և մնուցին վիճակը, իսկ յունուարի նստին ընկերութեան տարեկան տեղեկագիրը:

Յօդ. 21. Գործադիր ժողովոյ հաշիւները և մնուցկին վիճակը քննելու և արդիւնքը ընդհանուր ժողովոյ տեղեկագրելու պաշտօնով, չորս ամիսը անգամ մը երեք անդամէ բաղկացեալ հաշուեքննիչ յանձնաժողով մը կընտրուի ընդհանուր ժողովէն. գործադիր ժողովոյ անդամք չեն մասնակցիր սոյն քուէարկութեան:

Յօդ. 22. Գործադիր ժողովը պարտի նիստ ընել տասնհինգ օրը անգամ մը:

Յօդ. 23. Գործադիր ժողովոյ որոշումները անդամոց մեծամասնութեամբը վաւերական են:

Յօդ. 24. Գործադիր ժողովը սպիսպողական պարագայներու մէջ կարող է ազատաբար գործել, բայց պատասխանատուութիւնը իւր վրայ առնելու և ընդհանուր ժողովոյ յաջորդ նստին գրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ:

Յօդ. 25. Ընդհանուր ժողովոյ դիւանի պաշտօնավարութիւնը երկամեայ և գործադիր ժողովոյ պաշտօնավարութիւնը միամեայ է:

Հասոյթ

Յօդ. 26. Ընկերութեան հասոյթն է առայժմ:

ա. Ընկերաց ամսատուրք.

բ. Պատուոյ անդամաց բաժնեգինք.

գ. Ի նպաստ ընկերութեան հաւաքեալ նուէրք:

Յօդ. 27. Հասոյթին հարիւրին տասը պահեստ կը մնայ.

Վերաքննութիւն.

Յօդ. 28. Կանոնագիրս վերաքննելի է ի հարկին, այլ նպատակն ու ոգին անփոփոխ են:

Կ. Պոլիս, 13 մայիս 1879

—

Այս կանոնագրիս տրամադրութեանց համեմատ, Կիլիկեան ընկերութեան ընդհանուր ժողովոյ դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով:

Պ. Մինաս Չերազ	Ատենապետ
Պ. Կարապետ Կարեկեան	Ատենադպիր
Պ. Հրանտ Սատուր	Դեր-Ատենապետ
Պ. Յակոբ Նազարեան	Դեր-Ատենադպիր

Գործադիր ժողովը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Պ. Յովհաննէս Արշակունի	Ատենապետ
Պ. Տիգրան Առաքելեան	Ատենադպիր
Պ. Եդուարդ Իւթիւճեան	Դեր-Ատենապետ
Պ. Խաչատուր Մուրատեան	Դեր-Ատենադպիր
Պ. Յովհաննէս Արծրունի	Գանձապետ
Պ. Կարապետ Լաթիփեան	Համարակալ
Պ. Յակոբ Թաշճեան	

Կնքապահ ընտրուեցաւ պ. Միսաք Թաշճեան:

Կիլիկեան ընկերութիւնն ունի այսօր վարժարան մը Հաճընի մէջ, 60 աշակերտով և Շահնազարեան ուսումնարանի աշակերտ պ. Մելքոն Մանուկեանի տեսչութեան տակ, և կը պատրաստուի նոր դպրոցներ բանալ Զէյթունի և ուրիշ Կիլիկեան քաղաքաց մէջ. նա աւելորդ կը համարի բացատրել Ազգին թէ որքան ստիպողական է կրթութիւն տարածել մեր սիրելի Կիլիկեցի եղբարց մէջ, և տարակոյս չունի թէ այն հայրենասէրքը, որք «Արարատեան» և «Արևելեան—Դպրոցասիրաց» ընկերութեանց նպաստամատոյց կը հանդիսանան, իրենց լուման չը պիտի զլանան նաև «Կիլիկեան ընկերութեան»:

Ատենադպիր	Ատենապետ
Կ. Կարեկեան	Մինաս Չերազ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 8/20 յունիսի: Նախկին կայսրուհի Եւգենիա լսելով իր որդու մահը ուշաթափ եղաւ, և այդ ժամանակից սկսած գտնվում է կատարեալ անզգայութեան մէջ:

ՓԱՐԻԶ, 8/20 յունիսի: «Pays» լրագիրը հաղորդում է, որ Լուի-Նապոլէոն իր գնալուց առաջ կտակ է թողել, որի զօրութեամբ նա իրան յաջորդ է նշանակում Վիկտոր-Էմմանուէլի թոռան-պրինց Վիկտոր-Նապոլէոնին:

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ՓՕԹԻ, յունիսի 9-ին: Կիրակի օր, յունիսի 19-ին այստեղից դուրս գալու է, եթէ եղանակը աջող լինի ուղևորվելով դէպի կ. Պոլիս և Մարսէյլ Ֆրանսիական «Meuse» շոգենաւը, որ պատկանում է «Պակէ» ընկերութեանը և որի կապիտանն է պ. Նէլ:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցագիրների կանոնագրութեան XIV հատորի 1 յօդուածի համեմատ ոչոք իրաւունք չունի հեռանալ իր բնակութեան տեղից առանց օրինաւոր վկայութեան կամ անցագրի (յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15 նոյն կանոնագրութեան): Նոյն կանոնագրութեան 141 յօդուածի համեմատ մեշչանները, բոլոր կարգի գիւղացիկ և ծառաները, որոնք իրանց բնակութեան տեղից բացակայ են և գտնվում են կայսերութեան զանազան տեղերում 30 վերստ հեռաւորութեամբ իրանց բնակութեան տեղից արհեստներով կամ աշխատանքով ապրելու համար, պարտաւոր են տրված անցագիրներ ունենալ: Ծառայութեան մէջ գտնվող և ծառայութենից դուրս եկած աստիճանաւորների համար, նոյնպէս հոգևորականների, կուսակրօնների, տօհմական և անձնական ազնուականների, սրանց այրիների անցագիր վերցնելու ձևը մեկնված է անցագիրների կանոնագրութեան XIV հատորի 51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75, 89, 92, 112, 118, 119, 139, և 142 յօդուածների մէջ: Նոյն կանոնագրութեան 41 յօդուածի հեմեմատ ժամանակամիջոցը անցած անցագրով ոչոք ոչ մի տեղ ապրել չէ կարող: Այն անձները, որոնք ժամանակամիջոցը անցած անցագիրներ ունեն, կամ նրանց կորցրել են, պարտաւոր են անցագիրների կանոնագրութեան 42 և 211 յօդուածների համեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայութեան կամ ժամանակամիջոցը անցած անցագիրներով ապրողները, բացի այն որ պէտք է տան հարկաւոր վճարը անցագրի համար Հաշտարար դատաւորներից որոշված պատիժների կանոնագրութեան 61 յօդուածի համեմատ ենթարկվում են դրամական տուգանքի, որ լինելու օրը 15 կոպէկից և ընդհանուր գումարով 10 բուբլուց ոչ աւելի: Նոյն տուգանքի ենթարկվում են և նրանք, որոնք իրանց մօտ պահում են մարդկերանց առանց անցագրի, կամ ժամանակամիջոցը անցած անցագրով: Վերև մեկնած հանգամանքները ի նկատի ունենալով առաջարկում եմ Թիֆլիսի բնակիչներին, եթէ նրանց մօտ բնակվում են կամ ծառայում են այնպիսի մարդիկ, որոնք օրինաւոր անցագիրները չունեն, կամ որոնց անցագիրների ժամանակամիջոցը անցել է, այդպիսիներին ներկայացնել իմ վարչութիւնը, հակառակ դէպքում այս պահանջը չը կատարողները դատաստանի կենթարկվեն Հաշտարար Դատաւորներից որոշված պատիժների կանոնագրութեան 61 յօդուածի համեմատ: Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին, որ այն անձինքներին, որոնք կը բռնվեն առանց վկայականների կամ անցագիրների երբէք չեմ յանձնի մէկի պատասխանատուութեանը, այլ կտապով կուղարկեմ իրանց հայրենիքը: Մայիսի 6 1879 թ. Թիֆլիս: Թիֆլիսի գլխաւոր Պոլիցիմէյստեր գնդապետ Մերկլինգ:

ԲԱՐՁՐ ՈՒՍՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՄԻ ՕՖԻՑԵՐ, որ օտար լեզուներ էլ գիտէ, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է աշակերտներին ՁԻՆՈՐԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ գիմնազիաների և պրոգիմնազիաների համար: ՎՃԱՐԸ ՁԱՓԱՒՈՐ Է: Հասցէն կարելի է թողնել «Մշակի» խմբագրատանը, կամ անցնել Արտիլերիսկայա փողոց, տուն № 14.

1—3

ՅՈՒՆԻՍԻ 6-ից 1879 թ-ի

Նոր բացված է ԳԱՖԻԵԱՆՑԻ մագազին: Մեծ ընտրութիւն ռուսաց և հոլանդական կտաւի և սեղանի ծերմակեղէնի: Կան նաև զանազան կահ կարասիներ, մոմային, մանուֆակտուրական և այլ տպրանքներ:

Մագազինը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ հրապարակի վրա Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան բնակարանի տակ, Խարազովի տանը:

1—10

Дозволено Цензурою 11 Іюня 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона